ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը

«ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՊԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Քաղաքական ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի սեպտեմբերի 26-ի ՀՕ-229 օրենքի (այսուհետ՝ Օրենք)՝

1. 5-րդ հոդվածի 2-րդ մասում <Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած> բառերը փոխարինել <միգրացիայի հարցերով լիազոր> բառերով.
2. 5-րդ հոդվածի 4-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2. Օրենքի 6-րդ հոդվածի՝

1. 4-րդ մասում <տասնօրյա> բառը փոխարինել <30 օրվա ընթացքում> բառերով>, իսկ <Հայաստանի Հանրապետության Նախագահին> բառերը փոխարինել <դատական կարգով> բառերով.
2. 5-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 3. Օրենքի 7-րդ հոդվածի՝

1. վերնագրից հանել <և բողոքի> բառերը.
2. 1-ին մասից հանել <անհրաժեշտ փաստաթղթերի հետ, դիմումը (սույն օրենքի 5-րդ հոդված) ներկայացնում է Հայաստանի Հանրապետության Նախագահին, որը փաստաթղթերն ստանալուց հետո՝> բառերը, իսկ <մեկամսյա> բառը փոխարինել <եռամսյա> բառով.
3. 2-րդ մասում <ներկայացմամբ և Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից> բառերը փոխարինել <որոշմամբ> բառով.
4. 4-րդ մասում <Հայաստանի Հանրապետության Նախագահի> բառերը փոխարինել <Լիազոր պետական մարմնի> բառերով.
5. 6-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 4. Օրենքի 8-րդ հոդվածում <Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա քաղաքացիների իրավական վիճակի> բառերը փոխարինել <Օտարերկրացիների> բառով.

Հոդված 5. Օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասում <միջնորդությամբ դադարել> բառերը փոխարինել <որոշմամբ դադարեցվել> բառերով:

Հոդված 6. Օրենքի 11-րդ հոդված 1-ին մասում <մարմինն առաջարկություն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության Նախագահին> բառերը փոխարինել <մարմինը որոշում է ընդունում> բառերով:

Հոդված 7. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: